

# ՌՈՒՍ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

## ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ

DOI: 10.52174/2579-2989\_2023.2-13

**Հիմնաբառեր.** ռուս-ուկրաինական պատերազմ, բանկային համակարգ, դրամական փոխանցումներ, տնտեսական ակտիվություն, վարկեր, ավանդներ, շահութաբերություն

Ռուս-ուկրաինական պատերազմն ինչպես տարածաշրջանի, այնպես էլ ՀՀ-ի վրա էական ազդեցություն ունեցավ: Մի կողմից աճել է ՀՀ օտարերկրյա այցելուների քանակը, մյուս կողմից՝ նրանց դրամական հոսքերն ու ամբողջական պահանջարկը: Նման պարագայում բանկային համակարգում էական գործընթացներ են տեղի ունենում, որոնք հիմնականում պայմանավորված են ցպահանջ ավանդների արագ աճով, ոչ ռեզիդենտների կողմից բանկային ավանդներում կատարված ներդրումների աճի տեմպերի արագացմամբ: Սակայն, այս պայմաններում վարկավորման տեմպերն էապես չեն փոփոխվում, և բանկային համակարգը կարողանում է շահույթ ապահովել: Դա հիմնականում պայմանավորված է ոչ տոկոսային եկամուտների աճով, ինչն էլ, իր հերթին, կապված է ռուս-ուկրաինական պատերազմի ներքին և արտաքին հետևանքների հետ: Հետևաբար՝ կարող ենք ասել, որ բանկային համակարգն այս պահին փորձում է շահույթ ստանալ՝ օգտվելով ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքներից, սահմանափակումներից, ինչպես նաև դրանց առաջացրած շուկայական իրավիճակներից:


**2022** թվականից ի վեր ռուս-ուկրաինական պատերազմն ու բարձր գնաճը ողջ աշխարհի համար ամենահիմնական մարտահրավերներն են: Բացառություն չէ նաև ՀՀ-ն, որի դեպքում էական ռիսկեր կան՝ կապված նաև Արցախի հիմնահարցի և պատերազմի հետևանքների հետ: ՀՀ տնտեսությունն այս առումով առավել զգայուն է արտաքին տրանսֆերտներից կախվածության,




### Էդգար ԱՂԱԲԵԿՅԱՆ

Տնտեսագիտության  
թեկնածու, դոցենտ

2004 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2007 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան և աշխատանքի անցել ՀՊՏՀ արժեթղթերի շուկայի (այժմ՝ ֆինանսների) ամբիոնում, սկզբում՝ որպես ասիստենտ, ապա դոցենտ: Հեղինակ է մի շարք գիտական հրատարակումների և հեղագրությունների:

 <https://orcid.org/0000-0002-4194-5495>




ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

**ՀՀ սահմանափակումների հաշվեմանագրողի և ՌԴ քաղաքացիների զուտ մուտքերի շարժը 2017-2022 թթ.-ի ընթացքում<sup>1</sup>**

արտաքին առևտրաշրջանառության կազմում ներմուծման բարձր տեսակարար կշռի պատճառով: Սակայն, ինչպես ցույց տվեցին 2022 թվականի ընթացքը և 2023 թվականի սկիզբը, այն դեռևս շարունակում է շահած դուրս գալ իրավիճակից: Այս տեսանկյունից, բացառություն չէ նաև բանկային համակարգը:

Մակրոտնտեսական ցուցանիշներ կամ դրական զարգացումներ բացասական միջավայրում: Մակրոտնտեսական ցուցանիշների տեսանկյունից, դրական շարժընթաց ապահովող ամենակարևոր գործոնը ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով այցելուների մեծ ներհոսքն է


դեպի ՀՀ (գծապատկեր 1): Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, 2022 թվականը բացառիկ է եղել սահմանափակումների հաշվեմանագրողի կամ մուտքերի և ելքերի տարբերության մեծության առումով: 2017 թվականի միջին մեծությունից 2022 թվականի ցուցանիշը մեծ է եղել մոտ 39.6 անգամ: ՌԴ քաղաքացիների մուտքերի հաշվեմանագրողը մեծ է եղել նախորդ 5 տարիների միջին ցուցանիշից մոտ 5 անգամ: Այցելուների նման ներհոսքը և երկարաժամկետ կամ միջնաժամկետ գործունեության ու կեցության նպատակով ՀՀ-ում հաստատվելը չէին կարող չազդել մի կողմից տնտեսա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

**Տնտեսական ակտիվության ցուցանիշի և արտաքին առևտրաշրջանառության փոփոխությունների շարժընթացը 2022 թ. հունվար - 2023 թ. մարտ ժամանակահատվածում (տոկոսային)<sup>2</sup>**

<sup>1</sup> Աղբյուրը՝ ՀՀ միգրացիոն ծառայություն, <https://www.migration.am/statistics>  
<sup>2</sup> Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրության կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2022 թ. դեկտեմբերին (2023 թ. հունվարի 31-ի դրությամբ), <https://www.armstat.am/file/doc/99535848.pdf> <https://www.migration.am/statistics>, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2023 թ. մարտին (2023 թ. ապրիլի 25-ի դրությամբ), <https://www.armstat.am/file/doc/99537073.pdf>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

**«Քանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և «Ֆիզիկական անձանց կողմից դեպի արտերկիր կատարված փոխանցումների գուտ ծավալի փոփոխության շարժընթացը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ՝ 2021 թ. դեկտեմբեր - 2023 թ. փետրվար ժամանակահատվածում (ՌԴ-ից գուտ ներհոսքը՝ աջ առանցքում)»<sup>3</sup>**


կան ակտիվության և ամբողջական պահանջարկի, իսկ մյուս կողմից՝ տնտեսությունում և մասնավորապես՝ ֆինանսական համակարգում դրամական հոսքերի մեծության վրա:

Գծապատկեր 2-ից երևում է, որ 2022 թ. մարտի անկումից հետո տնտեսական ակտիվության և արտաքին առևտրաշրջանառության ցուցանիշները կտրուկ աճում են: 2022 թվականին առավելագույն տընտեսական ակտիվություն գրանցվել է հուլիսին՝ 19.4 տոկոս, իսկ արտաքին առևտրաշրջանառության առավելագույն աճ՝ օգոստոսին՝ 110 տոկոս: 2023 թվականի

մարտին տնտեսական ակտիվության ցուցանիշը եղել է 14 տոկոս, իսկ արտաքին առևտրաշրջանառության աճը՝ 110 տոկոս՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ:

Դրամական փոխանցումներ և փոխարժեք: Բնականաբար, տնտեսական ակտիվության ու արտաքին առևտրաշրջանառության նման աճն ուղեկցվում էր արտարժույթային հոսքերի աճով: Այս առումով, նախ՝ դիտարկենք ֆիզիկական անձանց բանկային փոխանցումների աճը (գծապատկեր 3):

Ինչպես երևում է գծապատկեր 3-ից,




ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

**Տնտեսական ակտիվության ցուցանիշի և արտաքին առևտրաշրջանառության փոփոխությունների շարժընթացը 2022 թ. հունվար - 2023 թ. մարտ ժամանակահատվածում (տոկոսային)»<sup>4</sup>**

<sup>3</sup> Աղբյուրը՝ «ՎԲ»: «Քանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և «-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված փոխանցումները», [https://www.cba.am/stat/stat\\_data\\_arm/5.%20Money%20transfers%20of%20individuals\\_arm.xls](https://www.cba.am/stat/stat_data_arm/5.%20Money%20transfers%20of%20individuals_arm.xls)

<sup>4</sup> Աղբյուրը՝ «ՎԲ» փոխարժեքների արխիվ՝ <https://www.cba.am/AM/SitePages/ExchangeArchive.aspx>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

**ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը և սպառողական գների ինդեքսը (փոփոխությունը՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ) 2021 թ. դեկտեմբեր - 2023 թ. մարտի վերջ ժամանակահատվածում<sup>5</sup>**

2022 թվականի մարտից ի վեր նկատվում են դրամական փոխանցումների զուտ մեծության, այսինքն՝ ներհոսքի և արտահոսքի տարբերության աճի միտումներ: Ընդհանուր զուտ ներհոսքի նվազում գրանցվել է 2022 թվականի հուլիսին, սակայն դրանից հետո աճի միտումը կրկին շարունակվում է: Այն իր առավելագույն մակարդակին է հասնում 2023 թվականի փետրվարին՝ 492 տոկոս: ՌԴ-ից փոխանցումների զուտ մեծության ծավալն ավելի արագորեն է աճում: Այն 2023 թվականին հասնում է իր առավելագույն մակարդակին՝ մոտ 1349 տոկոս:

Մակրոտնտեսական ակտիվությունն ու արտարժույթային հոսքերն առաջին հերթին ազդում են արտարժույթի փոխարժեքի վրա: 2022 թվականի սկզբի համեմատությամբ՝ 2023 թվականի ապրիլի վերջին ԱՄՆ դոլարի փոխարժեքը դրամի նկատմամբ նվազել էր 19,5 տոկոսով (գծապատկեր 4):

Գծապատկեր 4-ից ակնհայտ է դառնում, որ 2022 թ. մարտի կեսերին ՀՀ-ում ԱՄՆ դոլարի փոխարժեքը դրամի նկատմամբ հասնում է իր առավելագույն մակարդակին՝ մոտ 518 դրամ՝ 1 ԱՄՆ դոլարի դիմաց: Սակայն, հետագայում ներքին և արտաքին գործոնների ազդեցությամբ արտարժույթի փոխարժեքի անկումը դառնում

է անընդհատ գործընթաց: Այս ընթացքում ՀՀ ԿԲ-ն հանդես է գալիս շարունակական միջամտություններով, որոնք, սակայն, միտված էին ոչ թե փոխարժեքի կայունության ապահովմանը, այլ ժամանակավոր անհավասարակշռվածությունների ու հոսքերի հարթեցմանը<sup>6</sup>:


ԿԲ միջամտությունը ֆինանսական համակարգում արտահայտվում էր հիմնականում վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխությամբ, որի նպատակն արագացող գնաճի զսպումն էր (գծապատկեր 5):

Ինչպես երևում է գծապատկեր 5-ից, արագացող գնաճն առավելագույն մակարդակի հասնում է 2022 թվականի հունիսին՝ 10,3 տոկոս: Հետագայում գնաճի միտումներն աստիճանաբար դանդաղում են, և 2023 թվականի մարտի վերջին այդ ցուցանիշն արդեն 5,4 տոկոս էր: ՀՀ ԿԲ՝ ավելի վաղ ձեռնարկումների արդյունքում վերաֆինանսավորման տոկոսադրույքը հասնում է 10,75 տոկոսի: 2022 թվականի վերջին ԿԲ-ն դադարեցնում է տոկոսադրույքի բարձրացման գործողությունները՝ ներքին և արտաքին շուկաներում գնաճի ճնշումների նվազմանը զուգընթաց:

ՀՀ ԿԲ-ի կողմից տոկոսադրույքների բարձրացումը և տարածաշրջանային ռիսկերի մեծացումն ու անորոշության պահ-

<sup>5</sup> Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ: Սպառողական գների ինդեքսը՝ ամսական (նախորդ ամսվա, նախորդ տարվա դեկտեմբերի, նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ), [https://www.cba.am/Storage/AM/downloads/stat\\_data\\_arm/6.CPI.xls](https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/6.CPI.xls), Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքներ, [https://www.cba.am/Storage/AM/downloads/stat\\_data\\_arm/8-policy%20rates.xlsx](https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/8-policy%20rates.xlsx)

<sup>6</sup> Արտարժույթի փոխարժեքի փոփոխության մասով տե՛ս Эдгар Агабекян, Курс доллара США в Армении: размышления о причинах и перспективах, Амберд бюллетень 2022/5(18), стр. 5-13, <https://asue.am/upload/files/amberd/2022-year-5/1.pdf>



ԳԾԱԿԱՏԿԵՐ 6

**« ՀԲ-ի կողմից հրապարակվող 1, 3, 5, 10, 20 և 30 տարի մարման ժամկետ ունեցող պետական պարտատոմսերի՝ մինչև մարում եկամտաբերության կորերը 2022 թ. հունվարի 1 - 2023 թ. ապրիլի 28 ժամանակահատվածում<sup>7</sup>**

պանումը, առաջին հերթին, անդրադառնում են պետական պարտատոմսերի եկամտաբերության փոփոխության վրա: Եկամտաբերության աճը հանգեցնում է ֆինանսական ինստիտուտներում և մասնավորապես՝ բանկերում առկա ներդրումային փաթեթների արժեզրկմանը (գծապատկեր 6):


Գծապատկեր 6-ից ակնհայտ է դառնում, որ բոլոր պետական պարտատոմսերի եկամտաբերությունը, անկախ ժամկետայնությունից, աճել է: Սակայն, չնայած վերաֆինանսավորման տոկոսադրույքի՝ 2022 թվականի սկզբից մոտ 3 տոկոս աճին, եկամտաբերությունն ավելի քիչ է աճել հատկապես երկարաժամկետ պարտատոմսերի դեպքում, ինչի պատճառը գլխավորապես աճուրդներն էին: Պետական բյուջեի եկամուտների արագ աճի պայմաններում « ֆինանսների նախարարությունը պետական պարտատոմսերի աճուրդների պահանջարկի մասնակի բավարարման միջոցով փորձում էր զսպել տոկոսադրույքների աճը: Ընդ որում, 2023 թվականի փետրվարից հետո, երբ պարզ դարձավ որ « ՀԲ-ն հերթական անգամ չբարձրացրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը, նման քաղաքականության արդյունքում շուկայական եկամտաբերությունը սկսեց ավելի արագորեն նվազել, որին նպաստեց նաև այս գործիքների

նկատմամբ կենսաթոշակային ֆոնդերի և ֆինանսական շուկայի այլ մասնակիցների մոտ կուտակվող պահանջարկը: 2023 թվականի փետրվարի կեսին 2022 թվականի սկզբի նկատմամբ մեկ տարի մարման ժամկետ ունեցող պարտատոմսերի եկամտաբերությունն աճել է մոտ 2.4, երեք տարի մարման ժամկետ ունեցողներինը՝ 2, հինգ տարի մարման ժամկետ ունեցողներինը՝ 1,9, իսկ տասից երեսուն տարի մարման ժամկետ ունեցողներինը՝ մոտ 1,8 տոկոսային կետով: Նման իրավիճակում կարող ենք ասել, որ, չնայած տոկոսադրույքների աճին, պարտատոմսերի շուկայի հիմնական մասնակիցները պահպանում են դրական սպասումները և գերծ են մնում շուկայում պարտատոմսերի փաթեթների մեծածավալ վաճառքից: Միաժամանակ, բանկային համակարգում կուտակվող արտարժույթային միջոցները մեծացնում են պահանջարկը « պետական արտարժույթային պարտատոմսերի՝ եվրոբոնդերի նկատմամբ:

Ավանդներ և վարկեր: Տնտեսական ակտիվության ու դրամական հոսքերի աճի արդյունքում, երբ տոկոսադրույքներն արժեթղթերի շուկայում աճում են և հանգեցնում ակտիվների արժեզրկմանը, վանդների աճը կարելի է համարել որպես համարժեք արձագանք:

Ինչպես երևում է գծապատկեր 7-ից,

<sup>7</sup> Աղբյուրը՝ « ՀԲ: Եկամտաբերության կորեր, <https://www.cba.am/IMRM/YC/Yield%20Curves.xls>




ԳԾԱՊԱՏԿԵՐ 7

**Առևտրային բանկերի ներգրավված ավանդների, դրանց կազմում՝ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների ավանդների աճի տեմպերը (աճը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ) 2022 թ. հունվար - 2023 թ. մարտ ժամանակահատվածում<sup>8</sup>**

ավանդների աճի տեմպն արագացել է 2022 թվականի օգոստոսից հետո, և արդեն 2023 թվականի մարտի վերջին 2021 թվականի վերջի նկատմամբ ավանդների ծավալն աճել է 26,5 տոկոսով: 2022 թվականի տարվա սկզբից ոչ ռեզիդենտների ավանդների աճի տեմպը գնալով դանդաղում էր, սակայն մայիսից հետո այն սկսում է աճել՝ առավելագույն մակարդակին հասնելով 2022 թվականի հոկտեմբերին: 2021 թ. վերջի նկատմամբ 2023 թ. մարտի վերջին ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների ծավալն աճել է 45 տոկոսով: Նշենք, որ ինչպես նախկինում, այնպես էլ հիմա դրանց հիմնական մասն արտարժույթով


ավանդ է: Ռեզիդենտների ավանդների աճի տեմպն էականորեն չի տատանվել: Ժամկետային ավանդների արտարժույթային կառուցվածքում էական փոփոխություններ չեն եղել. 2022 թվականի սկզբից մոտ 42 տոկոսն արտարժույթային ավանդ է: Նույնպիսի իրավիճակ է գլխահանջ ավանդների կառուցվածքում, ինչից կարելի է ենթադրել, որ դրամի արժևորման միտումն ավանդների արտարժույթային կառուցվածքի վրա էական ազդեցություն չի գործել՝ ոչ գլխահանջ և ոչ էլ ժամկետային ավանդների դեպքում: Այս առումով, հետաքրքրական է ռեզիդենտների ժամկետային և գլխահանջ



ԳԾԱՊԱՏԿԵՐ 8

**Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից արտարժույթով և ՀՀ դրամով ներգրավված ժամկետային ու ցլպահանջ ավանդների աճի տեմպը (աճը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ) 2022 թ. հունվար - 2023 թ. մարտ ժամանակահատվածում<sup>9</sup>**

<sup>8</sup> Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ: Առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալներ, [https://www.cba.am/Storage/AM/downloads/stat\\_data\\_arm/5-Deposits%20by%20sectors.xlsx](https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/5-Deposits%20by%20sectors.xlsx)  
<sup>9</sup> Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ: Առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալներ, [https://www.cba.am/Storage/AM/downloads/stat\\_data\\_arm/5-Deposits%20by%20sectors.xlsx](https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/5-Deposits%20by%20sectors.xlsx)



ԳԾԱՊԱՏՎԵՐ 9

**Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտների տրամադրված ընդամենը, հիպոթեքային և սպառողական վարկերի աճի տեմպերը (աճը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ) 2022 թ. հունվար - 2023 թ. մարտ ժամանակահատվածում<sup>0</sup>**

ավանդների աճի տեմպերի ուսումնասիրությունը (գծապատկեր 8):

Ինչպես երևում է գծապատկեր 8-ից, և ՀՀ դրամով, և արտարժույթով ժամկետային ավանդների աճի տեմպերը նվազել են: ՀՀ դրամով ցպահանջ ավանդների աճի տեմպը էական տատանումներ չի ունեցել: Սակայն, 2022 թվականի զարնանից սկսել է աճել արտարժույթով ցպահանջ ավանդների աճի տեմպը, որն առավելագույն մակարդակի է հասել 2022 թվականի դեկտեմբերին: Սրանից կարելի է ենթադրել, որ բանկային համակարգում ներդրված միջոցները հիմնականում աճել են՝ ի հաշիվ արտարժույթային ցպահանջ ավանդների ու հաշիվների մեծացման:

Վարկերի պարագայում, ի տարբերություն տնտեսության, աճի տեմպերն ավելի դանդաղ են: Էական փոփոխություն գրանցվել է սպառողական վարկերի առումով, որոնց աճի տեմպերը, սկսած 2021 թվականից, նվազում էին: 2022 թվականի սեպտեմբերին սպառողական վարկերի փոփոխության տեմպն արդեն դրական է դառնում, իսկ 2023 թվականի մարտին՝ հասնում 11,3 տոկոսի: Հիպոթեքային վարկերի փոփոխության տեմպը հարաբերականորեն կայուն է, թեև առկա են որոշակի նվազման միտումներ: Վարկերի՝ ՀՆԱ-ից ավելի դանդաղ աճն է հիմնական պատճառը, որ 2022 թվականին նախորդ տար-

վա համեմատ բանկային համակարգում վարկեր-ՀՆԱ հարաբերությունը նվազել է 7 տոկոսային կետով՝ կազմելով 45,9 տոկոս՝ նախորդ տարվա 53 տոկոսի փոխարեն: Բանկային համակարգի ակտիվների և ՀՆԱ հարաբերակցությունն էլ նվազել է 2,7 տոկոսային կետով՝ կազմելով 98,7 տոկոս՝ նախորդ տարվա 101,5 տոկոսի փոխարեն<sup>1</sup>:


Բանկերի ֆինանսական ցուցանիշները կամ շահութաբերության աճը: Բանկային համակարգի հիմնական ֆինանսական ցուցանիշները համահունչ էին վերը նշված զարգացումներին (գծապատկեր 10):

2022 թվականի օգոստոսին բանկային համակարգի ակտիվների ու պարտավորությունների աճի տեմպերն արագանում են՝ դեկտեմբերին հասնելով առավելագույն մակարդակին: Արդյունքում, 2022 թվականի վերջին բանկային համակարգի ակտիվները նախորդ տարվա վերջի նկատմամբ աճում են 18,4, իսկ պարտավորությունները՝ 15,8 տոկոսով: Կապիտալի աճի տեմպերը մի քանի անգամ գերազանցում են ակտիվների և պարտավորությունների աճի տեմպերը՝ պայմանավորված բանկերում շահույթի աճի տեմպերով: 2022 թվականի վերջին բանկային համակարգի ընդհանուր կապիտալն աճել է 35,8 տոկոսով:

<sup>0</sup> Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ: Առևտրային բանկերի վարկերն ըստ ոլորտների (ամսական), [https://www.cba.am/Storage/AM/downloads/stat\\_data\\_arm/7-loans%20by%20branches.xlsx](https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/7-loans%20by%20branches.xlsx)


<sup>1</sup> Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ: Բանկային համակարգի ակտիվներ/ՀՆԱ, վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը, [https://www.cba.am/Storage/AM/downloads/stat\\_data\\_arm/Banks-GDP.xls](https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/Banks-GDP.xls)





ԳԾԱՊԱՏԿԵՐ 10

**ՀՀ բանկային համակարգում ակտիվների, պարտավորությունների և ընդհանուր կապիտալի աճի տեմպերը (աճը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ) 2022 թ. հունվար - 2023 թ. փետրվար ժամանակահատվածում<sup>12</sup>**




ԳԾԱՊԱՏԿԵՐ 11

**ՀՀ բանկային համակարգի ակտիվների որոշ տարրերի մեծությունը 2021 և 2022 թթ. վերջին (մլրդ ՀՀ դրամ) և դրա փոփոխությունները (տոկոս)<sup>13</sup>**

<sup>12</sup> Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ: ՀՀ բանկային համակարգի հիմնական հաշվեկշռային ցուցանիշները, [https://www.cba.am/Storage/AM/downloads/stat\\_data\\_arm/Banks-balance.xls](https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/Banks-balance.xls)

<sup>13</sup> Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ: ՀՀ վիճակագրական տեղեկագրեր, 2021 թ. դեկտեմբեր, <https://www.cba.am/AM/ppublications/Statistical%20overview%20XII.2021.pdf>, 2022 թ. դեկտեմբեր, <https://www.cba.am/AM/ppublications/Statistical%20overview%20XII.2022.pdf>





ԳԾԱՊԱՏԿԵՐ 12

**ՀՀ բանկային համակարգի շահույթը, տոկոսային ու ոչ տոկոսային եկամուտներն ու ծախսերը 2021 և 2022 թթ. վերջին (մլրդ ՀՀ դրամ) և դրանց փոփոխությունները (տոկոս)<sup>14</sup>**

Բանկային համակարգի ակտիվների կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք էական փոփոխություն չեն կրել: Ինչպես երևում է գծապատկեր 11-ից, ամենաէական աճն ունեցել են այլ պահանջները բանկերի և ԿԲ-ի նկատմամբ, որոնց տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում մեծ չէ:

Բանկային համակարգի շահույթի աճը նախորդ տարվա նկատմամբ 2022 թվականի դեկտեմբերին կազմել է 286 տոկոս: Նման աճ հիմնականում տեղի է ունեցել ոչ տոկոսային եկամուտների աճի արդյունքում: Տոկոսային եկամուտներն ու ծախսերն աճել են համապատասխանաբար 16 և 11 տոկոսով, իսկ ոչ տոկոսային եկամուտներն ու ծախսերը՝ 186 և 40 տոկոսով: Ոչ տոկոսային եկամուտների նման աճը կարելի է պայմանավորել արտարժույթային գործառնությունների, կոմիսիոն եկամուտների աճով, ինչն էլ պայմանավորված է արտասահմանյան փոխանցումների աճով, արտասահմանյան շուկաներում արբիտրաժային գործարքների իրականացման հնարավորությամբ և այլն:

Բանկային համակարգի ընդհանուր ակտիվների շահութաբերությունը, 2021 թվականի վերջի 0,91 տոկոսի փոխարեն, 2022 թվականի վերջին կազմել է 3,2 տոկոս, իսկ սեփական կապիտալի շահութա-

բերությունը 6,95 տոկոսից հասել է 21,56 տոկոսի<sup>15</sup>:

Ամփոփում: Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ ռուս-ուկրաինական պատերազմն էական ազդեցություն է ունեցել ՀՀ տնտեսության վրա, ինչը, առաջին հերթին, դրսևորվել է դեպի ՀՀ օտարերկրյա քաղաքացիների մուտքի աճով: Նման իրավիճակը հանգեցրել է դրամական հոսքերի մեծացմանը և տնտեսական ակտիվության աճին:

Արտասահմանյան փոխանցումներն ու արտաքին առևտրաշրջանառությունն իրենց հերթին ավելացրել են արտարժույթային հոսքերը, որոնց հետ կապված՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ զգալիորեն արժևորվել է ՀՀ դրամը և հնարավորություն է ստեղծվել որոշակի չափով խուսափելու գնաճի ավելի բարձր մակարդակից: Վերջինս պայմանավորված էր արտասահմանյան պարենային շուկաներում գների աճով և ՀՀ-ում ամբողջական պահանջարկի մեծացմամբ:

Բանկային համակարգը, բնականաբար, չէր կարող անհաղորդ մնալ և չձեռնարկել համապատասխան միջոցներ՝ խուսափելու նման միջավայրի առաջացրած հետևանքներից: Ինչպես պարզ դարձավ ավանդների կառուցվածքի ուսումնասիրությունից, էական աճի տեմպ են

<sup>14</sup> Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ: ՀՀ վիճակագրական տեղեկագրեր, 2021 թ. դեկտեմբեր, <https://www.cba.am/AM/ppperiodicals/Statistical%20overview%20XII.2021.pdf>, 2022 թ. դեկտեմբեր, <https://www.cba.am/AM/ppperiodicals/Statistical%20overview%20XII.2022.pdf>

<sup>15</sup> Հաշվարկը կատարվել է տարվա վերջում բանկային համակարգի ընդհանուր շահույթի և տարվա ընթացքում ակտիվների ու կապիտալի միջին մեծության հարաբերության հաշվարկի հիման վրա: Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ: ՀՀ բանկային համակարգի հիմնական հաշվեկշռային ցուցանիշները, [https://www.cba.am/Storage/AM/downloads/stat\\_data\\_arm/Banks-balance.xls](https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/Banks-balance.xls)

գրանցել ռեզիդենտների ցպահանջ և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները: Ինչ վերաբերում է ժամկետային ավանդների աճի ավելի դանդաղ լինելուն, ապա դա կարելի է պայմանավորել հիմնականում իրավիճակի անորոշությամբ և կուտակված հոսքերի ժամանակավոր բնույթով:

Վարկերի առումով, էական փոփոխություններ չեն գրանցվել, բացառությամբ սպառողական վարկերի աճի տեմպի արագացման: Եթե համադրենք վարկավորման ու տնտեսական աճի տեմպերը, կարող ենք ասել, որ վարկավորման գործընթացը տնտեսական աճին համարժեք չէ, ինչը չենք կարող պայմանավորել միայն վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացմամբ: Այստեղ էական դեր են կատարել տարածաշրջանում կուտակված ռիսկերն ու անորոշությունը, արտահանման լոգիստիկ խնդիրները, ինչպես նաև արտաքին գործոնների հետ կապված տնտեսական ակտիվության նման բարձր մակարդակը:

Բանկային համակարգի ակտիվների ու պարտավորությունների աճի տեմպերը նույնպես համարժեք չեն տնտեսական զարգացման տեմպերին, ինչի պատճառը վարկավորման և ավանդների ներգրավման տեմպերի դանդաղումն է: Արդյունքում, էական փոփոխություններ չի կրել նաև բանկերի ակտիվների կառուցվածքը: Թեև դրամային պետական պարտատոմսերի փաթեթներն արժեզրկվել են տոկոսադրույքների աճի հետևանքով, սակայն

բանկային համակարգը մեծացրել է ներդրումները պետական արժեկտրոնային պարտատոմսերում:

Ի տարբերություն ակտիվների, էականորեն մեծացել է բանկային համակարգի սեփական կապիտալի մեծությունը՝ շնորհիվ շահույթի ավելացման: Իսկ շահույթի աճի հիմնական պատճառը ոչ տոկոսային զուտ եկամուտների աճն է՝ պայմանավորված արտարժույթային գործառնություններով, կոմիսիոն վճարների աճով և այլն:

Հաշվի առնելով տնտեսական աճի, ինչպես նաև բանկային համակարգի շահույթի ձևավորման աղբյուրների կառուցվածքը՝ կարող ենք ասել, որ բանկային համակարգն այս պահին փորձում է շահույթ ստանալ՝ օգտվելով ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքներից, սահմանափակումներից, ինչպես նաև դրանց առաջացրած շուկայական իրավիճակներից:

Նման պայմանները բանկային համակարգի համար շահեկան են ոչ միայն արտաքին միջավայրի առաջացրած հետևանքներից կարճաժամկետ օգուտներ քաղելու, այլև նոր գործիքներ ստեղծելու և ներդնելու, նոր միջազգային ֆինանսական շուկաներ մուտք գործելու և դրանցում դիրքավորվելու առումներով: Ընձեռված հնարավորություններից չօգտվելու պարագայում իրավիճակի հանգուցալուծումից հետո բանկային և, ընդհանրապես, ֆինանսական համակարգի զարգացման տեմպն էականորեն կընկնի:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ միգրացիոն ծառայություն, <https://www.migration.am/statistics>
2. ՀՀ ազգային վիճակագրության կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2022 թ. դեկտեմբերին (2023 թ. հունվարի 31-ի դրությամբ), <https://www.armstat.am/file/doc/99535848.pdf>, <https://www.migration.am/statistics>
3. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական ցուցանիշները 2023 թ. մարտին (2023 թ. ապրիլի 25-ի դրությամբ), <https://www.armstat.am/file/doc/99537073.pdf>
4. ՀՀ ԿԲ, ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից դեպի արտերկիր կատարված փոխանցումները, [https://www.cba.am/stat/stat\\_data\\_arm/5.%20Money%20transfers%20of%20individuals\\_arm.xls](https://www.cba.am/stat/stat_data_arm/5.%20Money%20transfers%20of%20individuals_arm.xls)

5. ՀՀ ԿԲ, փոխարժեքների արխիվ՝ <https://www.cba.am/AM/SitePages/ExchangeArchive.aspx>
6. ՀՀ ԿԲ, սպառողական գների ինդեքսը՝ ամսական (նախորդ ամսվա, նախորդ տարվա դեկտեմբերի, նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ), [https://www.cba.am/Storage/AM/downloads/stat\\_data\\_arm/6.CPI.xls](https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/6.CPI.xls)
7. Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքներ, [https://www.cba.am/Storage/AM/downloads/stat\\_data\\_arm/8-policy%20rates.xls](https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/8-policy%20rates.xls)
8. ՀՀ ԿԲ, Եկամտաբերության կորեր, <https://www.cba.am/IMRM/YC/Yield%20Curves.xls>
9. ՀՀ ԿԲ, Առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալներ, [https://www.cba.am/Storage/AM/downloads/stat\\_data\\_arm/5-Deposits%20by%20sectors.xlsx](https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/5-Deposits%20by%20sectors.xlsx)
10. ՀՀ ԿԲ, Առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալներ, [https://www.cba.am/Storage/AM/downloads/stat\\_data\\_arm/5-Deposits%20by%20sectors.xlsx](https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/5-Deposits%20by%20sectors.xlsx)
11. ՀՀ ԿԲ, Առևտրային բանկերի վարկերն ըստ ոլորտների (ամսական), [https://www.cba.am/Storage/AM/downloads/stat\\_data\\_arm/7-loans%20by%20branches.xlsx](https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/7-loans%20by%20branches.xlsx)
12. ՀՀ ԿԲ, Բանկային համակարգի ակտիվներ/ ՀՆԱ, վարկեր/ՀՆԱ, [https://www.cba.am/Storage/AM/downloads/stat\\_data\\_arm/Banks-GDP.xls](https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/Banks-GDP.xls)
13. ՀՀ ԿԲ, ՀՀ բանկային համակարգի հիմնական հաշվեկշռային ցուցանիշները, [https://www.cba.am/Storage/AM/downloads/stat\\_data\\_arm/Banks-balance.xls](https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/Banks-balance.xls)
14. ՀՀ ԿԲ, ՀՀ վիճակագրական տեղեկագրեր, 2021 թ. դեկտեմբեր, <https://www.cba.am/AM/ppperiodicals/Statistical%20overview%20XII.2021.pdf>, 2022 թ. դեկտեմբեր, <https://www.cba.am/AM/ppperiodicals/Statistical%20overview%20XII.2022.pdf>

**Эдгар АГАБЕКЯН**

*Эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ,  
кандидат экономических наук, доцент*

ФИНАНСОВАЯ СИСТЕМА

## **ПОЛОЖИТЕЛЬНЫЕ ПОСЛЕДСТВИЯ РОССИЙСКО-УКРАИНСКОЙ ВОЙНЫ ДЛЯ БАНКОВСКОЙ СИСТЕМЫ РА**

Российско-украинская война имела значительные последствия как для региона, так и для Армении. С одной стороны, увеличилось количество иностранных посетителей РА, а с другой стороны, увеличились денежные потоки и общий спрос, генерируемый ими. В данном случае в банковской системе происходят значительные процессы, которые, в основном, обусловлены быстрым ростом депозитов до востребования, ускорением темпов роста вложений нерезидентов в банковские депозиты. Однако в этих условиях кредитные ставки существенно не меняются и банковская система способна обеспечить прибыль, что в основном связано с увеличением непроцентных доходов в связи с внутренними и внешними последствиями российско-украинской войны. Можно сказать, что банковская система в настоящее время пытается получить прибыль, используя последствия и ограничения российско-украинской войны, а также вызванные ими рыночные ситуации.

**Ключевые слова:** *российско-украинская война, банковская система, денежные переводы, хозяйственная деятельность, кредиты, депозиты, доходность*

FINANCIAL SYSTEM

**POSITIVE IMPACTS OF THE RUSSIAN-UKRAINIAN WAR ON THE BANKING SYSTEM OF THE REPUBLIC OF ARMENIA**

The Russian-Ukrainian war has had significant impacts on both the region and Armenia, including positive effects on the banking system. On the one hand, the number of foreign visitors to the Republic of Armenia has increased, leading to a rise in cash flows and overall demand. As a result, significant changes have taken place in the banking system, mainly due to a rapid increase in demand deposits and the acceleration of growth of non-residents' investments in bank deposits. However, despite these developments, lending rates have not changed significantly, enabling the banking system to generate profits. This can mainly be attributed to an increase in non-interest income resulting from the internal and external consequences of the Russian-Ukrainian war. It can be said that the banking system is currently leveraging the consequences and limitations of the Russian-Ukrainian war, as well as the market situations resulting from it, to make a profit.

**Key words:** *Russian-Ukrainian war, banking system, money transfers, economic activity, loans, deposits, profitability*

**Edgar AGHABEKYAN***Expert at «Amberd» Research Center, ASUE,  
PhD in Economics, Associate Professor*